

Վ. ԵՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ

# ՄԵՆԿ

Տարեկան գինը 7 ռուբլ, կես տարվանը 4 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արամխանեանի խանութում

Օտարաբաղաճայիք դիմում են ուղղակի  
Тифлис. Редакция „Менк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10-2

(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն կողմով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

## „ՄՂԱԿ“

Մտնում է առանձին համարներով, հատը 7 կոպէկով, բացի խմբագրատանից հետեւեալ խանութներում՝ ՄԱՏՈՒՐԵԱՆԻ և ԿԵՆԵՆԵՆԻ ԿՈՒՆԻՅԱՆ (Շաբաթօրէի տանը), Չ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԳՐԱՎԱՃԱՆԱՆՈՒԿՈՒԹՅԱՆ (Կամուրջի մօտ) ԳՐԻԳՈՒՍԻ ԺԱՂԱԿՆԵՐԻ (Միլիտարի տանը, Երևանեան հրապարակի վրա) և ՄԱՐՍՅԱՆԻ ԹԻՖԼԻՍԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ (Կամուրջի վրա):

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու տեսակ երիտասարդութիւն. — Ներքին և արտաքին: Մեր նամակագիրներին: Յ. Խատուրեանի ղեկավարութեամբ: Նամակ երևանից: Նամակ Ախտալից: Նամակ Խմբագրից: Ներքին լուրեր: — Արտաքին տեսակետներ: Ֆրանսիա: Թիւրքիա: Արտաքին լուրեր: — Խառն լուրեր: — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց:

### ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԻՒՆԻԹԻՒՆ

Օտարները հայերի մասին ասում են՝ երբ հայը նիւթականապէս փոքր ինչ ապահոված է, շինում է իր համար գեղեցիկ տուն և ջանք է զննում իր որդւոցը կրթութեւն: Եւ շատ գովելի յատկութիւն է, և ուրախվեն այն է, որ բոլորովին ճշմարիտ է:

Հայերը այն օրից, երբ ազատուեցան թուրքերի, պարսիկների ճնշումից, Կովկասում ամեն տեղ աշխատեցին իրանց նիւթական գրութիւնը բարւոյրելու:

Բոլորովին իրանց սեփական օյժերի վրա հիմնած, հայերը Կովկասում որտեղ որ սուրը դրին, ինչ բանի որ ձեռք տուին, — մշակեցին, զարգացրին, մի հաստատ աստիճանի բարձրացրին:

Հայերը իրանց գործունէութեամբ ցոյց տուին, որ ազատվելով վայրենի, անմիտ ճնշումից, կարող են, առանց մի որ և իցէ ազգի համար ծանրութիւն դառնալու, առաջ տանել լուսաւորութեան գործը և պետական մարմնի մէջ յայտնի և օգտաւէտ անդամ կազմել:

Տնտեսականապէս ապահոված հայերը ուղարկեցին իրանց զաւակները ուսումի: Մասկովայից, Պետերբուրգից ուսումնաւարտ երիտասարդների թիւը օրից օր աւելացաւ մեղանում: Հայերը վաղուց սովորած այդ բանին, դրանց վրա մասնաւոր ուշադրութիւն չը դարձրին: Եւ երիտասարդները հազիւ թէ համալսարաններին իրանց

մէջը ցոյց էին տալիս, արդէն պատրաստ էին դրանց համար տեղեր, զալիս էին յետ և մանում էին իրանց համար պատրաստած պաշտօններ. բաւական է որ երիտասարդը համալսարանիցն է, երկրի հանգը դիտէ, իսկ թէ նա այն պաշտօնին յարմարվում է, այդ, ինչպէս չէր վերաբերում:

Վերջին ժամանակներում, մօտ 15—16 տարի է, հայերը սկսեցին Եւրոպայ գնալ ուսումի: Եւ ի հարկէ նոր երևոյթ էր հայերի համար, այդ պատճառով երբ Եւրոպայից յետ դարձան ուսեալ երիտասարդներ, հասարակութիւնը անտարբեր չը մնաց դրանց վերաբերմամբ:

Ամեն կողմից սկսեցին դրանց քննել, դրանց վրա վիճել, և որովհետեւ համեմատելու առիթ կար, Եւրոպայում ուսում առածներին համեմատում էին Ռուսաստանում ուսում առածների հետ: Ամեն կողմից կանչում էին, պահանջում էին արտասահմանից եկած երիտասարդներից գործը:

Հասարակութիւնը սպասում էր երևի նրանցից հրաշքներ տեսնելու, և երբ տեսաւ, որ նրանք էլ հասարակ մահկանացուների պէս հրաշքներ անել չեն կարող, սկսեց նրանց դատապարտել, մեղադրել անգործունէութեան մէջ — դրանք խօսքի մարդիկ են, ասում էր հասարակութիւնը, դրանք գործքում անընդունակ են....

Որչափ որ անարդար և սխալ էր հասարակութեան կարծիքը Եւրոպա ուսում առած երիտասարդների մասին, այնու ամենայնիւ ներքին էր: Ամեն տեղ յետ մնացած հասարակութիւնը, ժողովուրդը նայում է հետեւանքների վրա և այնպէս իր վճիռը զննում, առանց քննելու, հետազօտելու այն ամեն խոչնդոտները, գիտարութիւնները, որոնք հանդիպում են գործող անձին իր գործունէութեան ժամանակ:

Հասարակութեան ի՞նչ փոյթ թէ Եւրոպայից դարձած երիտասարդը դառնալով Կովկաս մրտմի նոր և անձանօթ աշխարհ, ինչ փոյթ, որ նա ամեն քայլում

անտանելի գիտարութիւնների է հանդիպում, որոնց շատ անգամ բոլորովին ոչնչացնելը անկարելի է. նա պահանջում է գործը, որովհետեւ այդ աւելի հեշտ է տեսնել և աւելի հեշտ է նրան ըմբռնել: Բայց կարելի չէ ներել Ռուսաստանում ուսեալ երիտասարդների վարմունքը նրանց վերաբերմամբ:

Թէպէտ և այս պարունները լաւ գիտէին, որ Եւրոպայում ուսում առածները իրանց հետ մրցել չեն կարող, հէնց այն պատճառով, որ զէնքերը հաւասար չեն, հանգամանքները բոլորովին տարբեր են երկու կողմերի համար, որ տեղիս կեանքը, հասարակական գրութիւնը հազար ու մէկ դրժուարութիւններ է գոյացնում, զնում Եւրոպայից եկած երիտասարդների առաջ, որոնցից իրանք բոլորովին ազատ են, բայց սրանք այս ամենս միւս կողմը դրին, ժողովուրդի տգիտութեանից օգուտ քաղելով, ամեն կերպով աշխատեցին Եւրոպական երիտասարդների առնունքը կտորելու, վարկը գցելու: Ինչ նպատակով. հարկաւոր է միայն փոքր ինչ մտածել, և իսկոյն կը պարզվի:

Մի երիտասարդութիւն, որ քառասուն տարուց աւելի է Կովկասում գոյութիւն ունի և գնալով բազմանում է, բայց մինչև այսօր բացի երեւելի Երեցփոխեանցի բառարանից աւելի լաւ ոչինչ չէ արդիւնաբերել, այնպէս որ արտասահմանից եկածները գտան հասարակական կեանքը մեռած և նրա հօրիզօնի վրա մինչև անգամ մի համեստ ժողովրդական օրդանի նշոյլ չը կար, այո, այս երիտասարդութիւնը, որ իբրև նոր մտքերի, լուսաւորութեան ներկայացնող, բայց իսկապէս պատահած մտքերի և հնութեան շարունակողն է, աշխատում էր ամեն քայլում արտասահմանից եկածների առջև ամեն կերպ արգելքներ զնել և վերջը յայտնում էր թէ նրանք ոչինչ չեն կարող անել:

Մրանց մասին մենք ասացինք, որ հարկաւոր է մտածել և բանը կը պարզվի, բայց թէ ինչու՞ հասարակութիւնը այն, ի՞նչ որ պա-

հանջում էր մի քանի, զեռ նոր, արտասահմանից եկած երիտասարդներից, նոյնը չէ պահանջել և չէ պահանջում Ռուսաստանից եկած երիտասարդներից, մանաւանդ որ սրանց գրութիւնը ամեն կերպ աւելի լաւ է առաջններից, — այդ հարցին ի հարկէ այնպէս հեշտ չէ պատասխանել: Մենք կարծում ենք, որ ժողովուրդը, հասարակութիւնը ինստիլկուով իմանում է, որ Եւրոպա ուսումի համար գնացող երիտասարդը իրան գոհում է հասարակութեանը, առանց իր անձնական շահերի համար մրտածելու, իր կողմից հաւատալով հասարակութեանը, առանց նրանից խօսք առնելու պատրաստվում է նրա համար և գալիս է: Տարակոյս չը կայ, եթէ հասարակութիւնը նրան չի օգնի, իր պարտաւորութիւնը զէպի նրան կը մոռանայ, նա չէ կարող գործել և եթէ գործում է, սաստիկ մեծ գիտարութիւնների է հանդիպում, կարող է և ընկնել:

Ինչ ուզում են թող ասեն, նոր երիտասարդութիւնը չէ վճատել, արգելքներից չէ վախենում, իր սուրբ պարտաւորութիւններին հաւատարիմ կը գործէ լուսաւորութեան, առաջադիմութեան ասպարիզով: Ար մնայ որ հասարակութիւնը դրան ձեռք տայ, — փոխանակ պահանջելու միայն, — կը մնայ որ նա աշխատէ և օգնել:

Խնիւս

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՄԵՐ ՆԱՄԱԿԱԳԻՐՆԵՐԻՆ

Առաջին անգամը չէ, որ մենք անդադար տալիս ենք մեր նամակագիրներին պրօգրամներ, որոնց համեմատ նոքա պէտք է գրէին իրանց թղթակցութիւնները: Առաջին անգամը չէ, որ այդ հարցին վերաբերեալ յօդուածներ են տպվել «Մշակի» մէջ, բայց մեր նամակագիրները, մի քանի բացառութեամբ ի հարկէ մնացել են նոյնը, մանաւանդ նոքա, որոնք նոր են կամեում թղթակցել և որոնք ուշադրութիւն չեն դարձրել այդ յօդուածների վրա: Միակ նիւթեր, միակ հարցեր, որոնցով զբաղվում են մեր նամակագիրները այդ հոգեորակները, ուսումնարաններ, ուսուցիչներ և տեսուչներ են: Միւս բաները, միւս հարցերը նոյն համար գոյութիւն չունեն: Մի և նոյն հարցին վերաբերեալ, մի և նոյն հոգեորակների վերաբերեալ, մի և նոյն անձից



հարկն է և տաք սպաղարի նուիրատուների ազգերը, որք են.— Պ. Բուզալով 5 ռուբլ. Գ. Եւրաբանց 5 ռ., Գ. Ս. Ե. 5 ռ., Ե. Զոհրաբեանց 5 ռ., Գ. Ա. Ս. 1 ռ., Սալիցկի 50 կոպէկ, Սիլիանով 50 կ., Ժանդր 1 ռ., Մ. Փրիշտինանց 5 ռ., Վ. Մանուկարեանց 1 ռ., Աղուհանկանց 1 ռ., Արարատեանց 50 կ., Շ. 50 կ., X. 50 կ., Անդրանիկով 1 ռ., Ե. Լալայեանց 50 կ., Ա. Պէտրով 50 կ., Կ. Կալովիչ 1 ռ., Բէրեխնով 50 կ., Վերսովիկ 50 կ., Բարիսկեց 25 կ., Ե. Լ. 50 կ., Մ. Կ. 2. 50 կ., Ս. Լ. Բ. 50 կ., Մալովիկ 50 կ., Ս. Բիտովիչ 50 կ., Ա. Կամբարով 1 ռ., Վ. Կ. 1 ռ., Կասպրիժիկի 1 ռ., Սիլիանով 20 կ., Նաուսով 50 կ., Բ. 20 կ., Պոլտապով 50 կ., Եղերսկի 40 կ., Չինտով 50 կ., Գարովի 50 կ., Մաշին 50 կ., Լեմբերգ 30 կ., Պալազովիկ 30 կ., Գլէինբերգ 1 ռ., Գլաբովիկ 1 ռ., Կուզնեով 50 կ., Ի. Պ. 50 կ., Սալիցկի 1 ռ., Նեվիլսկի 50 կ., Տէրէնտիկ 50 կ., Դուրապով 50 կ., Չիգորիչ 1 ռ., Ֆոն-Գէրզէն 50 կ., Վ. Դիման 50 կ., Ա. Բ. 50 կ., Մ. Սենէտով 50 կ., Վիլիամ 20 կ., Բիկով 50 կ., Կրիտանովիկ 30 կ., Սալին 30 կ., Յիգլեր 50 կ., Վազնէնսկի 50 կ., Սալիցկի 50 կ., Ուշինսկի 50 կ., Սորովիկ 50 կ., Լապպո 1 ռ., X. (Բ) 2 ռ., Բէլիանով 1 ռ., Վասիլիկ 1 ռ., Սէրբերակով 1 ռ., Վրանդէլ 1 ռ., Լապտին 50 կ., Գրովով 50 կ., Պիտարով 50 կ., Ֆորովիկ 1 ռ., Գիտով 50 կ., Ն. Ն. 20 կ., Կասարտին 50 կ., Բիտով 50 կ., Չէրեանովիկ 50 կ., Արկուշիկի 50 կ., Կա... 20 կ., Փ. Պապովիկ 1 ռ., Պաղարէշ 1 ռ., Սաֆրանով 1 ռ., Մաքսիմովիչ 40 կ., Մեդզբովիկ 1 ռ., Ուշով 50 կ., Շուսկէնբերգ 1 ռ., Ակիմով 1 ռ., Սլավիկովիկ 50 կ., Մէսչերսկի 1 ռ., Մալերովիկ 50 կ., Գլաբովիկ 1 ռ., Սուշինսկի 1 ռ., Բազուլովիկ 3 ռ., Էրիկ 1 ռ., Բրանդ 1 ռ., Աշտմեր 50 կ., Ն. Ժ. 1 ռ., Չալովիկի 40 կ., Շաուրսկի 40 կ., Տրիկովիկ 30 կ., Պատեմիկ 20 կ., Սիմէնով 20 կ., Իգնա... 20 կ., X. 50 կ., Լանդէ 50 կ., Գլիման 50 կ., Փիլիպով 50 կ., Ֆիտինով 50 կ., Շիմանովիկ 50 կ., Գոֆման 25 կ., Բիֆիկի 15 կ., Նէստեր 50 կ., Գայիկի 20 կ., Պիտասով 20 կ., Վեա... 30 կ., Սէրէշ 40 կ., Կրանֆու 40 կ., Կանդրատ 20 կ., Մէլիցկի 25 կ., Բրայովման 25 կ., Գուլէֆ 35 կ., Բէլիկի 50 կ., Ֆոն-Բորեն 40 կ., Տորեն 40 կ., Բազալովիչ 50 կ., Ն. Ն. 20 կ., Կ. 50 կ., Գարովիանով 20 կ., Ս. 10 կ., Պէտրիչ 30 կ., Բովիցիկ 50 կ., Աբէլման 30 կ., Գալլ... 20 կ., Իլիմ 20 կ., Գիլիչ 50 կ., Անուֆրիկով 40 կ., Գէրովով 50 կ., Չիմանով 1 ռուբլ. Եւրասով 20 կոպէկ, Լէնց 20 կ., Ժուկովիկ 25 կ., Գու... 30 կ., Նի... 40 կ., Ի. Գ. 20 կ., Լիտովիկ 40 կ., Գ. Գ. 40 կ., Կրանովիկ 20 կոպէկ.— Ընդամենն է 104 ռ. 15 կոպէկ:

Գր. Եւրաբանց

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՒԱՆԻՑ պ. Զեյնալի մեջ հաղորդում է. «Քաղաքիս փողոցները շատ կեղտոտ են պահվում, առհասարակ այստեղ շատ անկարգութիւններ կան, որոնց առաջ կարող է առնել քաղաքային վարչութիւնը, որը չուտով, ինչպէս ստում են, էութիւն կը ստանայ Մի շարքի առաջ վախճանից Աֆրիկեան հարուստ վաճառականը, որը երկուսու ուսումնարաններին 300 ռուբլ ընծայելով Ասում են, որ նանդուցեալը կենդանի ժամանակ տղայաց ուսումնարանին տուել է 500 ռ. այն պայմանով, որ իւրաքանչիւր տարի վճարէ այդ դումարի տոկոսը: Յանկալի է, որ հանդուցեալի ժառանգները կատարեն նրա վերջին բարի կամքը, որ շատ քիչ է պատահում հայերի մէջ:»

ԵՐԵՒԱՆԻՑ գրում են. «Քաղաքիս վաճառանոցի գրութիւնը այժմ այսպէս է. շաբարի պուրը արժէ 11 ռուբլ, սուբի ֆունտը 80 կոպէկ, ցորենի խալարը 32—34 ռուբլ, գարու խալարը 30—31 ռ., բրնձի խալարը 75—80 ռ., տեղական բամբակի բաթմանը 2 ռ., իսկ Ամերիկայի տեսակի բաթմանը 2 ռ. 40 կ.: Միւս մթերքները կրկնապատիկ թանկ են:»

ԵՐԵՒԱՆԻՑ ԻՐՏԻՑ Աննա Յովհաննէսեանցից ստացանք 65 ռուբլ և հետեւել նամակը. «Ուղարկելով ձեզ 65 ռուբլ, որ մեզ յաջողվեցաւ ժողովել խառն-իւրտում յօգուտ 3000 տուն թշուառ հայ ընտանեաց, խնամարար խնորհմք հասցնել այս գումարը ըստ պատկանելոյն, իսկ նուր-

բատուների անունները հրատարակել ձեր լրագրի մէջ: Անա նուիրատուների անունները.— Պ. Արվերդեանց 10 ռուբլ, պ. Գերիմանեանց 10 ռ., պ. Սերաֆիմովիչ 10 ռ., պ. պ. պ. 6 ռ., պ. Գրիգորեանց 5 ռ., պ. Բաղինեանց 4 ռ., պ. Լիսիցեանց 3 ռ., պ. Զուրաբեանց 3 ռ., պ. Սուլայեանց 2 ռ., պ. Յովհաննիսեանց 2 ռ., պ. Չապուեանց 2 ռ., պ. Բաղինեանց 1 ռ., պ. Բաղրիտէ 1 ռ., պ. Լապրով 1 ռ., պ. Յուրի-նեանց 1 ռ., պ. Վարդանիկով 1 ռ., պ. Շուշանեանց 1 ռ., Տ. Լիսիցեանց 1 ռ., Աննա Յովհաննիսեանց 1 ռուբլ.— Ընդամենը 65 ռուբլ:

Փոթի-թիֆլիսեան ՄԻՒՍՅԱՅՈՎՈ կայարանից, պ. Ալէքսանդր Թավադարեանցից ստացանք հայ գաղթականների համար հաւաքած 80 ռուբլ և 10 կոպէկ: Անա նուիրատուների անունները.— Կսաւերիյ Կամաշեւսկի 65 կոպէկ, Николай Шлипец 60 կ., Иосиф Корвунъ 60 կ., Ալէքսանդր Միլասարեանց 2 ռուբլ, Մարգարէ Յովհաննիսեան 3 ռ., Միքայիլ Լուսուեան 1 ռ., Միշա Խօջամիրեան 3 ռ., Բաղդո Մեխրեան 50 կ., Сергей Филиповъ 1 ռ., Յարութիւն Խանգուրեան 8 ռ., Բաղար Մեխրեանց 1 ռ., Տիգրան Մ. Մեխրեան 50 կ., Василий Григорьевъ 1 ռ., Յարութիւն Միլասարեան 5 ռ., Վահան Ֆիլիպովեան 3 ռ., Գալուստ Խանգուրեան 50 կ., Владимиръ Лобановъ 60 կ., Տիգրան Յարութիւնեան 50 կ., Գ. Շահպարեան 1 ռ., Մարտիրոս Յակոբեան 1 ռ. 50 կ., Գրիգոր Յակոբեան 2 ռ., Մանուկ Թամբալեան 50 կ., Գարեթիկ Սվաշեանց 1 ռ., Նիկոլ Գեորգեան 40 կ., Յոյն Георгий Какулиди 1 ռ., Պօղոս Մերջանեան 5 ռ., Яковъ Казмарарянъ 1 ռ., Միք 1 ռ., Подполковникъ Акупинъ 1 ռ., Գրիգոր Սյուրմանեան 1 ռ., Կարապետ Մնացականեան 40 կ., Михаилъ Петровъ 3 ռ., Дарья Бондариусова 1 ռ., Պետրոս Տերիքեան 1 ռ., Յակոբ Մեծեիսեան 1 ռ., Յովհաննէս Գովսեան 50 կ., Բաղարտ Բիճիկեան 1 ռ., Միք 60 կ., Բենչեան 50 կ., Յարութիւն Խաչատրեան 40 կ., Միքաղաքացի 1 ռ., Միքաղաքացի 50 կ., Խաչատուր Մաթոսեան 30 կ., Տիգրան Մէլէնեան 1 ռ., Ալէքսանդր Սյուրմանեան 1 ռ., Ոմի հայ 2 ռ., Մարտիչ Զանթարեան 1 ռ., Արշակ Եւսեբեան 1 ռ., Ղազարոս Յարութիւնեան Սահարեան 40 կ., Արաքսի Յարութիւն 40 կ., Մկրտիչ Մուրադեան 50 կ., Յարութիւն Ղասաբաշեան 40 կ., Լէւոն Լուսինեան 2 ռ., Հայ պանդուխտ 10 ռ., Գրիգոր Փոստոյեան 1 ռուբլ.— Ընդամենն է 80 ռ. 15 կոպէկ:

Գեղեցիկների 6-ից սկսած ՌԻՖԼԻՍՈՒՄ աստուծի ձիւն է գալիս, այնպէս որ մի քանի օր փողոցներում բալիւրներով էին ման գալիս:

Մեր անցեալ համարում ՌԻՖԼԻՍՈՒ Դուրապի անցքի վրա խօսելով մի սխալ մտաւ: Չայնա-ւոր Գ. Շաղինովի տեղ պէտք է ապկէր ձայնաւոր Գ. Շահնշիբի:

«Бакинск. Изв.» լրագիրը հաղորդում է հաստատ աղբիւրներից, որ Բազու քաղաքային ինքնավարութիւնը մտնելու համար բոլոր պատրաստական այլապատանքները վերջացած են և որ դեկտեմբերի 6-ին նշանակված է ձայնաւորների ընտրութիւնը:

Նոյն լրագիրը հաղորդում է, որ ԲԱԳՈՒԻ հասարակութիւնը առատ նուիրատուութիւններ է անում բարեգործական նպատակների համար: Միայն նկատու է լրագիրը, ցանկալի կը լինէր, որ այդ նպատակով ներկայացուցներ աւողները հայի տային հասարակութեանը, որպէս զի գործ սկսողների վրա ոչինչ կասկած չը դրվի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական «Temps» լրագիրը մանրամասն կերպով պատմում է «France» լրագրի խմբագրի պ. Էմիլ դը-ժիրարդէի պատգամաւորների ժողովի համար պատգամաւոր ընտրելու անցքը վերջին լրացուցիչ ընտրութիւնների ժամանակ: Մի դահլիճի մէջ հասարակեան աւելի քան 3000 մարդ: Ցանկարձմունք են Վիկտոր Հիւզօ և Գամբետտա: Ժողովուրդը ընդունում է նրանց ծափահա-

րութիւններով և կեցցէներով: Վիկտոր Հիւզօ սանց հետեւեալ ճառը: Ֆրանսիայի դրութիւնը ամենահասարակ և մի և նոյն ժամանակ ամենասարափիլի է: Ֆրանսիան կուր մէջ է գտնվում, բայց ում հետ,— անձնական կամայականութեան հետ: Նորա թշնամի,— կամայականութիւնն է, այդ թշնամու դէմ պէտք է պատերազմել և պէտք է նրան յարթել: Նորան պէտք է յարթել թէ անձնաւորութեան և թէ սխտեմայի մէջ, որովհետեւ չը պէտք է որ մեր ներկայ դրութիւնը երբ և իցէ նորից կրկնվի: Մանր է, անտանելի է մեզ, Ֆրանսիացիներին համար, եթե տարի պանից առաջ հայրենիքի օտարի լուծի անասելի դժբաղդութիւնը կրելուց յետոյ, կրկին նրան տեսնել ճշմարտ մեզանից մէկի ձեռքից: Այդ ոչ պակաս մի ստորութիւն է: Ահա վերջովի և անասելի ճիմաժամի պատճառը: Այդ ճիմաժամը այդպէս չէ կարող շարունակվել: Մեր պարտաւորութիւնն է վերջ դնել մեր հայրենիքի այդ օրհասականին: Կարել սկսված է և մենք պէտք է տանենք, շարունակենք նրան մինչև վերջը: Մենք ամենքս պէտք է կուենք և ինչ որ ինձ է վերաբերվում, կսգնում եմ պատերազմի (ծափահարութիւններ և տղաբալիներ) և մենք գնում ենք, մենք գալիս ենք ձեր ետեւից): Այդ վճիռը ընդունելուց յետոյ, շատ հեշտ է լուծել այն խնդիրը որ այժմ ներկայանում է մեզ: Դուք պատերազմում էք, ուրիմ պէտք է ընտրէք մի պատերազմող, մի մարտնչող մարդ, այսինքն մի քաջ պատգամաւոր: Չը որոնէք նրան, նա արդէն գտնված է, նա ձեր առջին է դա Էմիլ դը-ժիրարդէն է: Դուք երբէք չէք կարողանայ գտնել մի աւելի արի կուսակից, դուք չէք գտնի մի անուն որ աւելի բարձր և աւելի որոշ նշանակութիւն ունենար: Մայիսի 16-ից սկսած ժիրարդէն անդադար, առանց ճշմարտութեան և ազատութեան գաղափարից չեղկելու, արդարութիւնը պաշտպանելու համար գործ էր դնում իր ամբողջ ճարտարութիւնը, իր ամբողջ լուրջ կա, իր խելի բոլոր կայծերը: Էմիլ դը-ժիրարդէն մեծ մարտնչող է, որ պատրաստ է մի մեծ կուրսու:

ԹԻՐԻՔԻԱ

Ռուսաց զորքերից արած ճշդութիւններից յետոյ ամեն կողմից բարձրացան ձայներ Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ խաղաղութիւնը կապելու մասին: Եւրոպական հասարակական կարծիքը բաժանվեցաւ երկու որոշ կարծիքների: Մի կողմից հաստատում են որ խաղաղութեան պայմանները պէտք է կապվին անմիջապէս Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ, միւս կողմից հաւատացնում են որ երկու պատերազմող կողմերը անտես չեն կարող առնել Անգլիային և պէտք է անպատճառ դիմեն Անգլիայի միջամտութեանը խաղաղութիւնը կապելու ժամանակ: Վիէնայի «Presse» լրագիրը գրում է թէ խաղաղական պայմանները կապելու ժամանակ ամենադժուար խնդիրը կը լինի Ռուսաստանի համար Թիւրքիայից պատերազմական ծախսերը ուղղելու: Լրագիրը հաւատացնում է, որ Ռուսաստանը դիտաւորութիւն ունի պահանջել Թիւրքիայից մի միլիարդ ռուբլ, որպէս պատերազմական ծախսեր, բայց որովհետեւ Թիւրքիան անակցած լինելով միջոց չէ ունենայ այդ տեսակ նշանաւոր գումարը վճարելու, Ռուսաստանը կը պահանջէ այդ պատերազմական ծախսերի վճարելը Անգլիայից, որի համար Անգլիան կը ստանայ Կրիտեան կղզին: Վիէնայի լրագիրը հաւատացնում է որ այդ միջոց առաջարկված է եղել զինեալ իգնաւորելով: Վիէնայի մի ուրիշ լրագիր, «Tagblatt» լսել է որ երեք պետութիւնների մէջ կայացաւ համաձայնութիւն արեւելքում խաղաղութիւնը վերականգնելու համար, հետեւեալ պայմաններով: Թիւր-

քիան մնում է կատարեալ անկախ պետութիւն, Ռուսաստանը հրաժարվում է իր դիտաւորութիւնից պահանջել պատերազմական ծախսերը և այդ պահանջի փոխարէն ստանալու է Հայաստանում հետեւեալ երկիրները: Բաթում, Տրապիզոն, Ղարս և Երզրում: Եւրոպայի երկիրների յարաբերութիւնները անփոփոխ են մնում: Բողբաբի, Բոսնիա և Հերցեգովինա ստանում են ինքնավարութիւն, թէև դարձեալ մնում են Սուլթանի աւատական իշխանութեան տակ, վերջապէս Բուլղարիան ճանաչվում է անկախ և դրվում է եւրոպական պետութիւնների հովանաւորութեան տակ, Չէրնոգորիան ստանում է նոր երկիրներ, թէև նրան տարւ չեն ոչ մի նաւահանգիստ, իսկ Սերբիան մնում է իր այժմեան դրութեան և սահմանների մէջ:— Կ. Պօլսից գրում են լրագիրներին, թէ Թիւրքիայի մայրաքաղաքում մեծ յուզումներ կան և ժողովուրդը սաստիկ ցանկանում է խաղաղութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Köln. Zeitg.» լրագրի թղթակիցը գրում է որ Թիւրքերի ունեցած անաջողութիւններից ներկայ պատերազմի մէջ, ամենից շատ օգուտ են քաղում Մուրադի կուսակիցները: Այս կուսակցութիւնը, որի առաջնորդները մեծ եռանդով աշխատում են տարածելու իրանց գաղափարները, ժամ առ ժամ գտնում են իրանց համար կուսակիցներ աւելի ստորին դասի ժողովրդի մէջ, Սօֆիաները քարոզում են հասարակ ժողովրդին որ Արդու-Համիդը իսկապէս սուլթան չէ, այլ իր հիւանդ եղբոր Մուրադի վերջի (տեղապահ) է և որ նա կը պարտաւորվի իր եղբոր առողջանալուն պէս հրաժարական տալ հարկաւոր է Արդու-Համիդին, եթէ հնարաւոր է, ստում են սօֆիաները, մինչև անգամ ոյժով ստիպել որ հեռանայ և թողնի զանր յօգուտ իր եղբոր Մուրադի: Մինչև որ այս այսպէս չի կատարվի, Ալլահի բարկութիւնը կը մնայ միշտ օսմանքի վրա, որովհետև նրանք մասնակցեցին Արդու-Համիդի յանցանքին: Պատերազմի անաջողութիւնները այդ բանի ամենալաւ պայցոյց են:

«Neue freie Presse» և «Daily News» լրագիրները հաղորդում են, որ Բարձր. Դուք հակված է թեյլ տալ անգլիական նաւատորմին մըտնել Կարգանեւեան ջրանցքը առանց դաշնադրութիւն կապելու Թիւրքիայի հետ, — Բազուլայից գրում են «Post» լրագրին, որ Թիւրքաց կառավարութիւնը փոխել կը կարգադրութիւնը ուստ արեղաներին Աֆօն սարից արտաքսելու:

«Vienna» լրագիրը գրում է «Daily News» լրագրին ղեկոսեմբերի 1-ից, որ Կ. Պօլսում աշխատել են Սուլթանին համոզել ստիպել իր եղբայր Մուրադին, որ նա ստորագրի հրաժարականը Թիւրքաց Կարից, Սուլթանը չը համաձայնեց, նկատելով, որ դրանով կը հաստատվէր Մուրադի առողջանալը:

«Figaro» լրագրին հաղորդում են, որ Պապի առողջութիւնը շատ վտանգաւոր դրութեան մէջ է: Սուրբ հօր աղջկանները եկան Հռօմ Սենեգալայից: — Յետիւնից գրում են «Wiener Tagblatt» լրագրին, որ Չերնօգորիայի իշխան Նիկօլայոս Թիւրքաց դէմ պատերազմող կառույցի արհաւիրների զորակոտ նշանակել է Մարիո Միլեանովին, որը վերջից նոր է առողջացել:

Նոյն լրագրին հաղորդում են, որ Թիւրքաց տէրութիւնը վճեց Լպլիբից 6000 զօրք պահանջել և նրանց մասամբ Սկուտարի և մասամբ Անտիպարի ուղարկել: — «Norddeutsche Allgemeine Zeitung» լրագիրը քննելով Բ. Դուան վերջին շրջաբերականը, որ ուղղված է Բոլցարներին, այն եղբակացութեան է համարում, որ չարաբոված, վերջին չնչի հասցրած ժողովրդին յիշեցնում է բարեբարութիւններ, որ Թիւրքաց տէրութիւնը կատարել է նրանց համար:

Կ. Պօլսում լուր տարածվեց, իբր թէ Անգլիան առանց Թիւրքաց կառավարութեան համաձայնութիւնը իմանալու հարցրեց Ռուսաստանից խաղաղութեան պայմանները և ստացաւ հետեւեալ պատասխանը, որ նա կարող է հաշտվել, միայն անմիջական բանակցութիւն պիտի ունենայ Թիւրքաց տէրութեան հետ, իսկ եթէ օտար պետութիւնները մասնակցեն, այն ժամա-

նակ Ռուսաստանի խաղաղական պայմանները աւելի խիստ կը լինեն և...

— Հիւսիս-Ալիսի փաշան որ Ղարսի գըլ-խաւոր հրամանատարն էր, զինուորական դա-տաստան է պահանջում, որ միջոց ունենայ...

— Բէյութի ընկերութիւնը հաղորդում է, որ Եգիպտոսի խեղճը 12,000 հետեակ և 1000 ձիաւոր օգնական զօրք է ուղարկում...

— «Köln. Zeitung» լրագրին գրում են, որ Պապը յանձնեց կարգինալ Պելչիին զօկումենտ և պատիրեց զազանի պահել մինչև նոր պայլի...

— Փարիզի IX ընտրողական մասում որի ներ-կայացուցիչ ազգային ժողովում միշտ հանգ-թիւն էր ընտրվում, այժմ ժիւլ Գրեվիի հրա-ժարականից յետոյ ձայների բազմութեամբ ազ-գային ժողովի անդամ ընտրվեց Էմիլ Դը-ժիրար-դէն հանրապետականը:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Շ... քաղաքից մեզ հաղորդում են, որ տեղա-կան օրիորդաց ուսումնարանի հոգաբարձուներէց մէկը անգիթարար ծեծուած է մի աշակերտուհու նրա համար, որ երկխան համարձակվել է իր ընկերուհու տեղ պատասխանել: Այս էր պա-կաս մեր ուսումնարաններին, որ հոգաբարձուքն էլ ծեծէին սանիկներին:

Մի քաղաքից մեզ գրում են որ այս օրերումս վախճանակեցաւ մի կին, որին եկեղեցական կա-նոններին համեմատ թաղելու իրաւունք չը տուցե տեղոյս բարեկարգը, պատճառ բերելով, որ հանգուցեալի ազնիւր ապօրինի ապրում էր մի պարոնի հետ: Կնոջը առանց քահանայի թա-ղում են: Մի քանի օրէց յետոյ մի հարուստ ինքնապայման տէր հայրը թաղում է ամենայն շքեղութեամբ:

ԱՍՍԱՐԱՍՏԱՆԻ մեզ գրում են «Պատերազմը բացվելու օրից մեր ախարալաքցիներին և մա-նաւանդ մեր գաւառի զիւղացիներին գրպան-ները արծաթներով լցվեցան: Ուրիշ կողմից ապ-րանքները և մանաւանդ առաջին հարկաւորու-թեան մթերքները օրից օր թանկանում են:

Պատերազմից առաջ մի սօմար գարի և մի սօ-մար ցորեն միասին արժէր 10 ռուբլոց ոչ ա-ւելի, իսկ այժմ գարիի և ցորենի նոյն քանա-կութիւնը արժէ 45 ռուբլ: Այդ թանկութեամբ մենք պարտական ենք մեր չարչիւններին:»

ԱՍՍԱՐԱՍՏԱՆԻ մեզ գրում են որ Ղարսի առանց լուրը մեծ հանդիսով տօնվեցաւ Ախալ-քալաքում: Տեղական ընակիչները խնջոյք պատ-րաստեցին և հրաւիրեցին այդ խնջոյքին զինուո-րական վարչութեան անդամներին: Այդտեղ հա-ւաքվեցաւ հինգ ռուբլի մէջ 360 ռուբլ յօդուտ «Կարմիր խաչ» ընկերութեան: Նշանաւոր գու-մարներ ընծայեցին Ս. Վարդանեանց 120 ռուբլ. և Ս. Ստանջանեանց 100 ռուբլ:

Լրագրիները հաղորդում են, որ իշխան Բիս-մարկ ծանր հիւանդ է: Նորա բժիշկը կանչված է Վարցի, Բիսմարկի ամաբանոցը: Ասում են, որ նա խնդրել է զերմանական կայսրից իր հրաժարականը ընդունել:

«Новое Время» լրագրից տեղեկանում ենք, որ Չինիցայի երկաթուղին շուտով բոլորովին պատրաստ կը լինի: Մնում է քսան վերստ տարածութեան վրա երկաթէ զծեր դնել:

ՇՈՒՇՈՒՅ մեզ հաղորդում են, որ չըջակայ-քում գտնված Հացի-Վիւղի մէջ սեպեմբերին ֆօտօգրի հետ անդրջը վարվելուց երեք հոգի են այրվել մայրը և իր զրկումն եղած երկու զաւակներ:

Հանրապետական լրագրիները այսպէս են ձևակերպում Ֆրանսիայի ներկայ գրութիւնը:

- Ցանկանում էք դուք հնադանդիւն երկրի կամքին, հարցնում են Մակ-Մանօնից:
— Չեմ կարող:
— Ուրեմն դուք դուք կամենում էք ստիպել Ֆրանսիային, որ նա հնադանդիւն ձեր կամքին:
— Այո, ոչ այդ կը լինէր coup d'etat (պետա-կան հարված) — դրա մասին ես երբէք չեմ մտա-ծել:
— Գուցէ դուք հրաժարական կը տար:
— Չեմ կարող, ես իմ խոստումներով կապ-ված եմ:
— Ուրեմն ինչ էք կամենում:
— Հիմ, չը գիտեմ:
— Ախար պէտք է մի բան...
— Այ, կը տեսնենք:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

На 1878 годъ ПОДПИСКА

На всѣ газеты и журналы (русскія и ино-странныя) принимаетъ Контора объявленій Н. ВАСМУТЪ И К-о МОСКВА Мясницкая д. Гагариной

1878 թւի համար

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է՝ ՍՏՈՐԱ-ԳՐՈՒԹԻՒՆ

Երոյր թէ ուսաց, թէ արտասահմանի լրա-գիրների և ամսագրիների վրա

Ն. ՎԱՍՄՈՒՏ ԵՒ ԸՆԿ. Ցայտարարութիւնների կանտօրալում: 2-5

ԱՆՈՒՇԱՀՈՏ ՍԱՊՕՆԵՐԻ ԵՒ ԿՕՍՄԵՏԻԿՍ-ԿԱՆ ԱՊՐԱՆԲՆԵՐԻ ՑԱՐԻԿԱ ՄՕՍԿՎԱՍՅՈՒՄ ԲՐՈՎԱՐ ԵՒ ԸՆԿ.

Կարելի է ստանալ սեփական խնամքներով ՆԻԿՈՒՍԿԱՑԱ փողոց, տուն Բօստանի փողոց Իլինկա փողոց, տուն Թրոշկոգո փողոց: Նոյնպէս ՌՈՒՍՍԱՍՏԱՆԻ ԲՈՒՈՐ ԳԱՎԱՐՆԵ-ՐՈՒՄ գլխաւոր վաճառականների մօտ: Պրէսիւրան ուղարկվում է ձրեպէս: 3 (6) — 1

„ՄՂԱԿԻ“ խմբագրատան

մէջ ծախվում է տպելու ԹՈՒՂԹ-էժան գնով: Տեսնել կարելի է ա-մեն օր առաւօտները, մինչև 12 ժամ կէտօրի:

Въ редакціи «МПАКЪ» по случаю продается дешево ком-ментарная бумага. 5-5

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՕԲՅՈՐԷ» ամենօրեայ գրականական և քաղաքական լրագրի

1878 թւականի յունվարի 1-ից Թիֆլիսում կը հրատարակվէ ամենօրեայ «Օբզոր» լրագիրը լրագրական մեծ թերթի ձևով:

Ստորագրվելու գինն է տարեկան ուղարկելով կամ հասցնելով 14 ռուբլ. կէս տարվանը — 8 ռ., 3 ամսանը — 4 ռ. 25 կօպէկ, և մէկ ամսան գինն է 1 ռ. 50 կօպէկ:

Ամբողջ տարվայ համար յետաձգութեամբ ստորագրվել ցանկացողները վճարում են հինգ-հինգ ռուբլ յունվարի, ապրիլի և օգոստոսի սկիզբներին: Քաղաքի ստորագրողներէց ստորագրութիւնը ընդունվում է «Վովկասան գրավաճառանոցում» Միքայիլեան կամուրջի մօտ Ա. Ջուբալօվի տանը: Օտարաքաղաքացիք գիտնում են իրանց պահանջով «Օբզոր» լրագրի խմբագրութեանը, Թիֆլիսում հետեւեալ հասցեով: Въ редакцію газеты «Обзоръ» въ Тифлисъ.

3-3

Խմբագիր Ն. Նիկօլազէ կառավարիչ Պ. Իզմայլով

ԹԻՖԼԻՍԻ Մանածողովը յօդուտ Թիւրքիա-ից դէպի Անդրկովկաս զաղթականների յայտ-նում է որ յօդուտ կարօտեալ զաղթականների ընդունվում են ամեն տեսակ հին և նոր շոքեր, Պահեստը դանդաղ է Արծրունու քարվան-սարայի մէջ: Նուիրատուները թող բարեհաճեն բերել կամ ուղարկել իրանց այդ նուէրները նախկին Իվանովի այժմ Յովաննիսեանի ըն-թեքացարանը, Գվօրցօվի փողոց, Արծրունու տուն, որտեղ և կը ստանան տպված ստացականներ իրանց ընծայաբերութեան համար: 10-20 (1)

ԹԻՖԼԻՍԻ Մանածողովը յօդուտ զաղթա-կանների յայտնում է որ, դրամական նուիրա-տուութիւնները յօդուտ զաղթականների ընդուն-վում են «Մշակ» և «Тифл. Вѣстн.» լրագրիների խմբագրութիւնների մէջ և «Փորձ» հանդիսի խմբագրատան մէջ: Նոյնպէս ընդունվում են դրամական նուիրատուութիւնները և պ. Զի-թախօվի կանտօրալում, Շաղինօվի քարվան-սարայում, (Բաղաղիւսանի կտակ):

10-20 (1)

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12.

Տ Ե Ղ Ե Կ Ա Յ Ո Յ Ց

ԹԻՖԼԻՍ. 1877.

Table with multiple columns: ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌՈՒՆՈՑ (Գեղեցիկների 12-ին), ԳՐԱՆՈՒՄ, ԳՐԱՆՈՒՄ, ՓՕՍՏ, ՓՕՍՏԻ ԿԱՌՔԻՐ, ՎԱՃԱՌՈՒՆՈՑ (Գեղեցիկների 12-ին), ԳՐԱՆՈՒՄ, ԳՐԱՆՈՒՄ, ՓՕՍՏ, ՓՕՍՏԻ ԿԱՌՔԻՐ. Includes various financial and administrative data.